

11182



2011

664.8
2-51

ՀԵՂԻՆԱԿԻ

ՊՏՈՒՂ 200 Բ ՑԵԼԵԼ

ՏԱՄԱՆՅԱԼԸ ՆՎԱՐՈՒՄ



ԹԻՓԼԻՍ

Արագաստից Մաս, Մաքարուսիանցի,
Միքայելիան փողոց, № 81.
1900

2002

664.8

630
38-25

Ա. ԶԵԼԻՆՈՎԻ

2-51
Կ. Ա.

ՊՏՈՒՂ ՀՈՐԱՑՆԵԼԸ

ՏԱՄԱՆՅԻՎԵՑ ՆԿԱՐՈՒԴ.

1054



ԹԻՓԼԻՍ

Արագատիալ Մն. Մարտիրոսեանցի,
Միքայէլեան փողոց, № 81.

1900

17478

070

020

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Дозволено Цензурою, Тифлисъ, 5-го Ноября 1899 года.

Այգեպանութիւնը գիւղատնտեսական ճիւղերից ամենաշահաւէան է, բայց մեր ժաղովուրդը նրանից շատ քիչ եկամուռ է ստանում, որովհետև չգիտէ օգտուել այգու պառզներից:

Անգրկովկասում մշակում են շատ և զանազան տեսակ բարեխառն և շոգ երկրի պառզները. բայց նրանցից հեշտութեամբ վաճառում են աւելի դիմացկուն տեսակները, որոնց կարելի է պահել երկար ժամանակ: Այս կարգի պառզներից են միայն խնձորը և տանձը, այն էլ նրանց ընտիր տեսակները, որոնք անվիաս պահում են մինչև զալնան վերջը և կարող են արտահանուել: Սակայն բացի խնձորից և տանձից, մեր այգիներում կարելի է գտնել շատ տեսակ աւելի նուրբ և համեղ պառզներ, ինչպէս են օրինակ՝

ծիրանը, գեղձը, սալորը, կեռասը և այլն; Բայց
այս պտուղները դիմացկուն չեն և կարճ ժամա-
նակում փառում են և ոչնչանում: Այս տեսակ
պտուղները թէկ տանտեսութեան մէջ շատ յարգի
են, այնուամենայնիւ ցածր գնով են վաճառում,
որովհետեւ անկարելի է թարմ ժամանակ նրանց
հեռու տեղ ուղարկել: Աւելի օգուտ կստացուի
այդպիսի պտուղներից, նոյնպէս և ցածր տե-
սակի խնձորներից և տանձերից՝ եթէ նրանք
չորացնուին, որովհետեւ չոք մրգեղնը հեշտ է
արտահանել:

Տոր մրգեղնի մեծ պահանջ կայ թէ եւրո-
պայում և թէ նոյն-իսկ նուսաստանում, որտեղ
գործ է ածուում տարուայ ընթացքում մի քանի
միլիոն փութ: Միայն Ամերիկայի Միացեալ
նահանգներից նուսաստանը ստանում է իւրա-
քանչիւր տարի երկու միլիոն փութից աւելի
չոք միբոք, որի փութը եթէ հաշուենք ամենա-
պակասը Յ առւրի՞ գուրս կզայ, որ նուսաստանը
չոք մրգեղն գնելու համար իւրաքանչիւր տարի
տալիս է միայն Ամերիկայի Միացեալ նահանգ-
ներին մինչև կեց միլիոն ռուբլի: Անդրկովկասը,
որտեղ այգեպանութիւնը բաւական տարածուած
է՝ կարող է արտահանել ոչ թէ զեց միլիոնի
չոք մրգեղն, այլ մի քանի անգամ աւելի, եթէ

նրա ժողովուրդը կարողանայ չորացնել իւր այ-
դիների պտուղները այնպէս՝ ինչպէս չորացնում
են Ամերիկայում: Մեր երկրում չգիտեն պտուղ
չորացնել այնպէս, որ միբզն ունենայ որոց յատ-
կութիւն և շուկայում գնահատուի: Զարմանալի
չէ ուրեմն, որ ոչ միայն բուն Ռուսաստանի քա-
ղաքներում, այլ նոյն-իսկ Անդրկովկասի մեծ ու
փոքր քաղաքներում, որոնց ժողովրդի պարապ-
մանց մի ճիւղը այգեպանութիւնն է, վաճառում
է ամենաքարեզ գնով արտասահմանի մրգեղն,
ինչպէս են՝ ծիրանի չիրը, սալորաչիրը, չամի-
չը և այլն, իսկ մեր պտուղների ամենանորը և
ընտիր տեսակներից միրզը հազիւ է վաճառում,
այն էլ ցածր գնով, և գնում են միայն տեղա-
կան բնակիչները: Այս երկութը կարելի է քա-
ցարել նրանով, որ մեր համեղ պտուղներից,
չորացնելու եղանակը չգիտենալու պատճառով,
ստացւում է կոպիտ, անհամ և շուտ փառող
մրգեղն, որ, յայտնի բան է, չէ կարող մրցել
արտասահմանի մրգեղնի հետ:

Այգեպանութիւնը այն ժամանակ կարող է
շահաւէտ լինել, երբ այգուց ստացուած պտու-
րը կարելի լինի արտահանել, իսկ այս կա-
րող է տեղի ունենալ միայն այն ժամանակ,
ելք այգետէրերը սկսեն պատրաստել թարմ պը-


առողից այնպիսի մրգեղէն, որ իւր յատկութիւն-
ներով կարողանայ մրցել արտասահմանի մրգե-
ղէնի հետ:

Մենք այս գըքոյկի մէջ կաշխատենք ծա-
նօթացնել այգեաէրերին պատող չորացնելու
եղանակի հետ, որը գործադրում է Ամերիկայում
և Եւրոպայում, իսկ ներկայումս նաև Թուսա-
տանի շատ մասերում, և կհաղորդենք այս ճիւղի
վերաբերեալ հարկաւոր գիտելիքներ, ցանկա-
լով որ այգեաէրերը օգտուին մեր հաղորդած
տեղեկութիւններից, որոնք հիմնուած են զիտու-
թեան և փորձի վրայ:

I

Ամեն մի պատող՝ չորացնելուց առաջ
պէտք է ենթարկել որոշ պատրաստու-
թեան. խնձորը, տանձը, սերկեիլը և զեղ-
ձը պէտք է կճպել, միջուկն ու կորիղը
հանել և կարատել. սալորի, կեռասի, բա-
լի և ծիրանի կորիղները պէտք է հա-
նել և այլն: Եյս բոլորը կարելի է անել
ձեռքով. բայց դա նախ որ շատ ժամա-
նակ կարհանջէ և երկրորդ՝ հարկաւոր
կլինին շատ բանուորներ: Այս գործը հեշ-
տացնելու համար՝ Ամերիկայում և ուրիշ
երկններում գործ են ածում զանազան
մեքենաներ և գործիքներ, որոնց օգնու-
թեամբ աւելի կարճ ժամանակամիջոցում


Կքիշ բանուորներով կարելի է լինում մեծ քանակութեամբ պտուղներ կճակել, հանել նրանց միջուկները կամ կորիզները և մաս-մաս կտրատել: Այսպիսի գործիքների թիւը շատ է, բայց մենք կյիշենք այս-



1. ԿՃԵՊԱՑՅԱՆ „GOLD MEDAL“.

տեղ նրանցից աւելի գործածականները:
1) Կճեպահաններ: Կան դանազան


տեսակ բարդ և պարզ կճեպահան գործիքներ, բայց նրանցից աւելի յարմարներն են՝ ինձորի և կլոր գեղձի համար Սկօտափ «Gold medal» (ոսկէ մեղալ) անունով գործիքը (նկ. 1). իսկ այն պտուղների համար, որոնք կոլոր չեն, ինչպէս օրինակ տան-



2. ԿՃԵՊԱՑՅԱՆ „WHITE MOUNTAIN POTATO PARER“.

ձը՝ գործադրում է «White mountain potato parer» կոչուած գործիքը (նկ. 2): Այս երկու գործիքներն էլ կարելի է պանել գործիքավաճառ խանութներում 1—2 ոսուրիով: Բացի նրանցից՝ կան տւելի

բարդ գործիքներ, որոնց միջոցով կարել է միաժամակ թէ կճպել պտուղը և թէ հանել նրա միջուկը և կտրատել: Այսպիսի գործիքները միայն խնձորի համար են, բայց կարելի է գործ ածել և սերկելի համար. միայն սերկելիը հարթ երես չունենալու պատճառով՝ պէտք է




3. ԿԱՇՊԱՀԱՆ ԵՒ ԿՏՐՏԻՇ „ORIOLE“.

փոս տեղերը յետոյ մաքրել դանակով: Այսպիսի կճպահան գործիքներից ամենայարմարն է «Oriole» անունով սերկենան (նկ. 3), որի միջոցով պտուղը կարելի է

միաժամանակ կճպել, հանել նրա միջուկը և կտրատել պարուրած ժապաէնի նման: Արժում է այս գործիքը 3—4 ռ.:


2) Միջուկահաններ: Խնձորի կամ սերկելիի միջուկը հանելու համար շատ



4. ՄԻՋՈՒԿԱՀԱՆ „SUN APPLE CORER“.

յարմար է «Sun apple corer» անունով գործիքը (նկ. 4), որ արժում է 3 ռուբ. լի: Միջուկը հանելու համար՝ խնձորը կամ


սերկելը պէտք է տեղաւորել գործիքի տախտակի փոքրիկ կոնաձև բեեռի վրայ և նրա խողովականման մասը, կոֆը շարժելով, իջեցնել պտուղի վրայ. այն ժամանակ գործիքի այս մասի ծայրը կը մտնէ պտուղի մէջ, կկարէ և դուրս կը



5. ՄԻԶՈՒԿԱՅԱՆ ԳՈՐԺԻՔ.

հանէ նրա միջուկը: Աւելի պարզ է միւս տեսակ միջուկահանը (նկ. 5): Խնչպէս երևում է նկարից՝ այս գործիքը ներ-


կայացնում է տախտակի վրայ ամբացրած մի ճիւղաւոր նեցուկ, որի երկու ճիւղի ծռուած գլխների օղերի միջով արձակ շարժում է պտուտակաձև ձող, խողովականման գլխով: Մաքրած խնձորը կամ սերկելը հարկաւոր է տեղաւորել, գործիքի նկարին համեմատ, նրա տախտակի վրայ խողովակածայր ձողունի ուղղութեամբ, և ձեռքով սղմել ձողունի գլուխը. այն ժամանակ վերջինի ծայրը կմտնէ պտուղի մէջ, կկարէ և դուրս կհանէ նրա միջուկը: Այս գործիքը արժում է մօտաւորապէս մի ոռուլի:



6. ԿՈՐԽԶԱՅԱՆ ԿԵՍ

3) Կորիզահաններ: Կեռասի կամ բալի կորիզը հանելու համար գործ են

ածում առանձին տեսակ ոլորաթելից շինած կաստ (նկ. 6), որի գործածութիւնը երեսում է նկարից: Արժում է այս կաստը 25—30 կոպէկ: Բացի սրանից՝ կայ և մի ուրիշ գործիք, որ շատ նման է № 5 միջուկահան գործիքին. դանաղանում է նրանից միայն տախտակի



7. ՍՅԼՈՐԻ ԵՒ ԿԵՇՈՒԽԻ ԿՈՐԻԶԱՑԱՆ

վրայ ամբացրած փոքրիկ բաժակով (նկ. 7), որի մէջ զնում են պտուղը՝ կորիզը հա-


նելուհամար: Այս գործիքը յարմարացրած է սալորի և ծիրանի կորիզը հանելու, բայց կարելի է գործ ածել նոյնպէս կեռասի և բալի համար, միայն վերջի գէպրում պէտք է տախտակի վրայ տեղաւորել աւելի փոքր բաժակ:



8. ԿՏՐՏԻ ԵՒ ՄԻՋՈՒԿԱՑԱՆ ԳՈՐՔԻՔ

4. ԿՏՐՏԻ ՀՆԵՐԻ: Պտուղը կտոր-կտոր անելու համար աւելի գործածական են երկու ձևի կտրտիչներ. մէկի միջոցով (նկ. 8) կարելի է միաժամանակ հանել

տանձի, խնձորի կամ սերկեթի միջուկը և
ճաղ-ճաղ անել, այսինքն կտրատել վերե-
ւից նելքե 4 կամ 6 մասը. իսկ միւս



9. ԿՏՐՏԻՉ՝ «CURTIC SLICER».


գործիքով, որ կոչում է «Curtic Slicer» (նկ. 9), կարելի է կտրատել մաքրած և
միջուկը հանած պտուղը լայնութեան
ուղղութեամբ, այսինքն տափակ-տափակ:
Առաջի գործիքն արժում է 1 ոռոր. 50
կոպ., իսկ երկրորդը՝ մօտաւորապէս 10
ոռորի:

Մաքրած տանձը, խնձորը կամ սեր-
կեթը քիչ ժամանակի մէջ սկանում են և
նրանց միջուկը գոյնով այնքան դուրեկան
չէ լինում: Եթէ պտուղը մաքրելուց յետոյ
խկոյն չորացնուի՝ այն ժամանակ նա
չի գունաթափուի և կմնայ իւր բնական
գոյնով. բայց այս անելը շատ դժուար է,
որովհետեւ միաժամանակ չորացնում են
որոշ քանակութեան պտուղ, իսկ նրան
պատրաստելու համար հարկաւոր է նոյն-
պէս որոշ ժամանակ, որի ընթացքում
պատրաստուած պտուղը կարող է սեմալ:
Դրա դէմն առնելու համար՝ պատրաստ-
ուած տանձը, խնձորը և սերկեթը (կըճ-
պած, միջուկը հանած և կոտորած) են-
թարկում են ծծմբի միխազգութեանը,
այսինքն նրանց ծծմբի մուխ են տալիս:
Ծծմբամուխ տուած պտուղը չորացնելուց
յետոյ մաքրով, սպիտակ գոյնով է լինում
և շուտ չէ փառում, որովհետեւ պտուղի մէջ
գոյութիւն ունեցող բոլոր վնասակար մա-

003
004

նրամարմինները (микроорганизмы), ո-
րոնց ազդեցութեամբ պառզը փառւմ է՝
ոչնչանում են ծծմբի միով:

Պառզին ծծմբամուխ տալու համար
գործ են ածում զանազան տեսակ արկղդ-
ներ, որոնցից ամենայարմարն է Ցիմմեր-



10 ԺԵՄԲԱՄՈՒԽ ՏԱԼՈՒ ԳԵՇԵՐԵՑՆ

մանի պահարանը (նկ. 10): Այս պահարա-
նը, ինչպէս երեսում է նկարից՝ հաստրակ
կօմօտի նման է, որի մէջ փոխանակ արկղդ-

ների լինում են վեց հատ չորս անկիւնանի
մալ: Այս մաղերի վրայ դարսում են մա-
քրած պառզը, մացնում են պահարանի
մէջ, տեղաւորելով նրանց տափակ ձողուն-
ների վրայ. յետոյ պահարանի յատակի
վրայ փոքրիկ ափուէի մէջ վառում են մի
թէյի գդալի շափ ծծմբափոշի և ապա փա-
կում են պահարանի գռները: Ծծմբի միով
մէջ ալտուղը պահում են 10 ըսպէից ոչ
աւելի, որովհետեւ շատ պահելուց՝ չորա-
ցած պառզը անախորժ համ է սահանում:

Կայ և ուրիշ միջոց մաքուր և սպիտակ
միրգ ստանալու համար. մաքրած պառզը
կարելի է քցել թոյլ աղաջըի մէջ, իսկ յե-
տոյ, չորացնելուց առաջ, ողողել մաքուր
ջրով, մանաւանդ այն դէպքում, երբ նա
աղաջըի մէջ երկար ժամանակ է մնացել:

ևոչ պակսեցնել նրա տաքութեան գօրութիւնը: Բացի սըանից՝ պտուղը արեգակի տաքութիւնով չորանալու ժամանակ աղա չէ կարող մնալ քամու, ցօղի և այլ ֆիղիքական երևոյթների ազգեցութիւնից, որոնք որոշ կերպով պակսեցնում են մրգի յատկութիւնը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներում, նոյնպէս և Եւրոպայի շատ երկրներում, պտուղը, մինչև անդամ բանջարանոցի գանգան բոյսերը (գինձը, սամիթը, բաղրիջնը և այլն) չորացնում են արուեստական տաքութիւնով, առանձին հնոյների մէջ: Փորձով յայտնի է, որ այս միջոցով չորացրած մրգեղինը՝ երկար ժամանակ չէ փտում, համը, հոտը չէ փսխում, պահպանում է թարմ պտուղի բոլոր յատկութիւնները, վերջապէս ստացւում է արտաքին տեսքով աւելի գուըեկան միրգ, որ վաճառանոցում աւելի մեծ գին ունի: Արուեստական տաքութիւնով պտուղ չորացնելը

II.

Անդրկովկասում պտուղը չորացնում են, ինչպէս յայտնի է՝ միայն արեգակի տակ: Այս կերպ չորացրած միրգը մեծ մասմբ կնճուած է լինում, մուլթ և աղտոտ գոյնով և երբեմն էլ թթուաշ համով, թէն չորացրած լինին քաղցր պտուղներ: Բացի սըանից՝ այս միջոցով չորացրած միրգը եփելու ժամանակ գժուաբութեամբ է կակում կամ շատ շուտ տրորւում է: Պըտուղը չորացնել՝ նշանակում է նրա միջի հիւթը գոլորշիացնելով հեռացնել միայն այն աստիճան, որ պտուղը ոչ աւելի և ոչ պակաս չորանայ: Իսկ այս անկարելի է իրագործել արեգակի տաքութիւնով, որովհետեւ մարգս չէ կարող ոչ աւելյացնել

այն առաւելութիւնն էլ ունի, որ մարդու կարող է շթաղնել, որ պառզը ոչ աւելի և ոչ էլ պակաս չորանայ, որովհետեւ այդ կախուած է մարդու կամքից, որ կարող է աւելացնել կամ պակսեցնել տաքութեան աստիճանը: Բացի սրանից՝ այս միջոցով կարելի է չորացնել մեծ քանակութեամբ պտուղ, ամեն ժամանակ, ամեն եղանակում և շատ կարճ ժամանակամիջոցում: Վերջի հանգամանքը ապրանքի համար մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ յայտնի է, որ երբ պառզը ենթարկում են բարձր աստիճանի տաքութեան աղղեցութեանը, և շուտ է գորոշիանում նրա մէջի հիւթը՝ այն ժամանակ պտուղի մէջ գոյութիւն ունեցող օսլայի մի մասը (25% չափ) վերափոխուում է շաքարի, ուրեմն պառզից, չորացնելով այս միջոցով, կըստացուի աւելի քաղցր մրգեղէն, որ չէ կարող տեղի ունենալ արեղակի տակ չորացնելու ժամանակ:


Պառզը չորացնելու համար կարելի է օգտուել թէ մեր թոնրից և թէ գործածել դրա համար յատուկ շինած հնոցներ: Թոննի մէջ չորացնելու համար՝ պտուղը պէտք է զարսել շաբքով ուռենու ճիւղերից հիւսուած սալաների մէջ, որոնց կողքերին տնկում են մի քանի հատ մի վերջովի երկարութեան վայտի կառներ, որպէսզի սալաները մէկ մէկու վրայ դարսելու ժամանակ՝ նրանց մէջ արանք մնայ օդը խաղալու համար: Թոննիրը վառելուց և նրա կողքերը մաքուր սրբելուց յետոյ՝ սալաներից մէկը պէտք է իջեցնել թոնը յատակը, տեղաւորելով նրան կատից շինած շորս նեցուկների վրայ, իսկ նրա վրայ պէտք է զարսել միւս սալաները և թոնը բերանը ծածկել իւռիով, թոննելով մի վերջոկանոց ծակ: Պառզը թոնը մէջ չորացնալու ժամանակ աւելորդ գորոշչին խուփի ծակով դուրս է զալիս. բայց գորորչու հեռանալը աւելի հեշտացնելու համար՝

պէտք է ծակի վրայ ամբացնել մի արշին երկարութեան սկ թիթեղից շինած խոզովակ: Յայտնի բան է, որ թոնը ներքեկ սալաների վրայ դարսած պառողը, տաքութիւնը աւելի լինելով, շուտ կչորանայ քան վերեկ սալաների մէջի պառողը. ուրեմն իւր ժամանակ, որ կարելի է որոշել միայն փորձով՝ պէտք է չորացած պառողը հանել և տակի սալաների տեղ իջեցնել վերեկ սալաները, կամ, անելի լաւ է, նորից թոնիրը թեթե վառել և նրա մէջ տեղաւորել ներքել թարմ պառուղներով լցրած սալաներ, իսկ վերել կիսաշոր պառուղներով սալաներ:

Թոնը մէջ պառուղ չորացնելը այնքան յարմար չէ, որովհետև գժուար է որոշել պառուղի չորանալու ժամանակը և անկարելի է ոչ աւելացնել և ոչ պակսեցնել տաքութեան աստիճանը: Այս գէպքում հարկաւոր է հմառութիւն և միայն փորձով կարելի է հասնել այս տեսակ հմառութեան: Աւելի լաւ է պառուղը չորացնելու համար

գործ ածել դրա համար յօրինուած յատուկ գործիքներ և հնոցներ, որոնցից կրիչենք այսուեղ մի քանիսը:

Պտուղ չորացնելու գործիքներից մէկն է «The Cranger» անունով սպիտակ թիթեղեայ շինած արկղը (նկ. 11), որը ներ-




11. ՀԿՈՅՑ „THE GRANGER“.

կայացնում է տափակ, չորս կողմը փակ մի անօթ մի հատ ծակով: Այս ծակով ձագառի միջոցով ջուր են լցնում արկղի մէջ մինչև կէսը և յետոյ նրա մի գլուխը դնում

Են պլիտայի վրայ, իսկ միւս գլխի տակ մի նեցուկ են տալիս, որ վէր չընկնի: Երբ պլիտայի տաքութիւնից արկղի մէջի ջուրը սկսում է եռալ՝ այն ժամանակ նրա վրայ շարքով դարսում են պատրաստած պտուղը, որը 2—3 ժամուայ ընթացքում չորանում է: Պառզ չորացնելու այս գործիքը երեք շափսի է լինում, մէկը 18 դիւմ լայնութեամբ, 26 դիւմ երկարութեամբ, միւսը 24 դ. լայնութեամբ, 36 դ. երկարութեամբ, իսկ երրորդը՝ 24 դ. լայնութեամբ և 72-դ. երկարութեամբ: Այդպիսի արկղ կարող է չինել ամեն մի թիթեղնագործ:

Պլիտայի տաքութեան միջոցով պտուղ չորացնելու համար աւելի լաւ է ֆիլտ և Ընկերութեան հնարած պահարանը (նկ. 12): Այս պահարանը նրանով է յարմար, որ պտուղը դարսում են առանձին մաղերի մէջ, և բացի սրանից, նրա կողքին շինուած է մի խողովակ, որ մտնում է պլի-

տայի ծինելոյդի մէջ և որի միջոցով գուրս է գնում պտուղից գոյացած գոլորշին: Այս




12. ԳԼԻՏԵՑՔԻ ՎՐԱՅ ԴՆԵԼՈՒ ՊԱՀԱՐԱՆ

պահարանի մէջ կարելի է չորացնել օրը 5—6 փութ պտուղ: Ֆիլտ և Ընկեր, պա-

Հարանը արժում է իւր տեղում մօտաւորապէս 10 ռուբլի:


Ցիշեալ երկու տեսակ չորացնելու գործիքները յարմար են փոքր քանակութեամբ



13. ՑԻՇՄԵՐՄԵՐՆԻ № 2 ՀԵՇՔ

պառուղ չորացնելու համար: Մեծ այգի ունեցողներին կառաջարկենք ձեռք բերել


պառուղ չորացնելու համար առանձին հնոցներ, որոնց միջացով կարելի է չորացնել տասնեակ փութերով պառուղ: Պառուղ չորացնելու հնոցներից գերազանելի են՝ Ցիշմերմանի № 2 հնոցը (նկ. 13), որ կարող



14. ԳԼՈՒԽՄԵՐԻ № 2 ՀԵՇՔ

է գործ ածուել և տնտեսութեան ուրիշ դէպքերում, Պլումմերի № 2 հնոցը (նկ.

14) և „Ամերիկանկա“ անունով բիղերի
հնոցը: Այս հնոցներից առաջի երկուսը



15. ՀԵՌՅ. „ԱՄԵՐԻԿԱՆԿԱ“.

կարելի է գնել ամեն մեկը 60—70 ռուբ.,
իսկ վերջինը արժում է մօտ 100 ռուբլի:

Բոլոր կճպող, կորիզահան, միջուկա-
հան և կտրտող գործիքները մի հնոցի
հետ միասին կնստի մօտաւորապէս 160—
200 ռուբլի:

III.

Սրուեստական տաքութիւնով կարելի
է չորացնել, ինչպէս յիշել ենք վերեր՝ թէ
ամեն տեսակ այգու պտուղներ և թէ բան-
ջարանոցի լոյսելիք: Գիխաւոր պտուղները
չորացնելու եղանակի վերաբերմամբ ան-
հրաժեշտ են հետեւալ գիտելիքները.

ԽԵԶՈՐ: Զմեռնային խնձորը չորացնել
ձեռնտու չէ, որովհետեւ այս տեսակ խըն-
ձորը արժեք ունի, նոյն-իսկ թարմ ժա-
մանակ և կարելի է արտահանել հեռաւոր
տեղեր. չորացնելու համար պէտք է գործ
դնել ամառնային խնձոր կամ աշնանային
խնձորի ցածր տեսակը, որ թարմ ժամա-
նակ գժուարութեամբ է վաճառւում, այն

Էլ աժան գնով, և շուտ է փտում և փշա-
նում: Թթու և քաղցր խնձորների միրզը
անուշահամ չէ լինում և շուկայում չէ գնա-
հատում. աւելի համով միրզ է ստացւում
թթուաշ խնձորից: Նոյնպէս լաւ տեսքով
չէ լինում մանը խնձորի միրզը, և չորա-
ցնելու համար աւելի լաւ է գործ ածել
խոշոր և միջակ մեծութեան տեսակները:
Խնձորը չորացնելու համար անպայման
պէտք է մաքրել, այսինքն կճպել, նրա մի-
ջուկը հանել և մաս-մաս կոտորել:

ՏԱՅՅ: 2որացնում են այս սպառվի
քաղցր և քիչ դդպութիւն ունեցող տեսա-
կը: 2կճպուած տանձի չորը չէ գնահատում
և արտահանելու համար անպէտք է: Մանը
տանձը կարելի է չորացնել սաղսաղ,
իսկ խոշոր տեսակները պէտք է երկու
կտոր անել վերեից ներքեւ: Կարծի միտ
ունեցող տանձը առաջ պէտք է կակղա-
ցնել ջրի գոլորշիով, որ կատարւում

է հետեւեալ կերպով. կաթսայի մէջ կիսով
չափ ջուր են լցնում և տաքացնում. յե-
տոյ մաքրած տանձը դարսում են սալայի
վրայ և սալան զնում են կաթսայի մէջ,
տեղաւորելով նրան փայտեայ կամ եր-
կաթեայ նեցուկների վրայ այնպէս՝ որ
սալայի տակը չկպչի ջրին, իսկ կաթսայի
բերանը ծածկում են խուփով: Երբ ջուրը
եռում է՝ այն ժամանակ սալայի միջի
տանձը զոլորշու ազդեցութեամբ կակլում
է. բայց չպէտք է թողնել, որ նա եփուի,
այլ վեր առնել այն ժամանակ, երբ ծըղ-
նօտը հեշտութեամբ կմտնի տանձի մէջ:
Կակղելուց յետոյ տանձը հանում են կաթ-
սայի միջից և գնում են հնոցը՝ չորացնե-
լու համար: Տանձը չորացնում են առ-
հասարակ պոչով:

ՍԵՐԿԵՒԻԼ: Այս պտուղը չորացնում են
ինչպէս խնձորը և տանձը. բայց որովհե-
տե նա աւելի կարծր միտ ունի՝ առաջ ան-

պատճառ պէտք է ենթարկել գուտըշու աղ-
դեցութեան այնպէս՝ ինչպէս կակդացնում
են տանձը: Չորացնում են իրրե կերակրի
մթերք սերկելիի միայն թթուաշ տեսակը,
որ մեր երկրում մեծ ծաւալով կարող է
գործ ածուել:

ԴԵՂԶ: Չորացնելու համար գեղձը ան-
պայման պէտք է կճպել և կառը-կտոր ա-
նել՝ եթէ լործ է, այսինքն միսը կորիզին
կպած է, կամ բաժանել ելկու մասի՛ եթէ
նա ճղովի տեսակից է: Կճեպով չորացրած
գեղձը յարգ չունի և վաճառում է երկու-
երեք անգամ ցածր գնով: Առհասարակ
չորացնելու համար եւրոպայում և Ասերի-
կայում գործ են ածում գեղձի ճղովի տե-
սակը, որ աւելի նուրբ է և տալիս է շատ
ախորժելի միբզ:

ՃԻՐԱՆ: Եիրանաշիրը մեծ գործածու-
թիւն ունի, մանաւանդ մեր երկրում, որով-

հետեւ նա թէ կերակրի մթերք է և թէ ա-
նուշահամ միբզ: Եիրանը շորացնում
են թէ կճպած և կորիզը հանած և թէ
կճեպով և կորիզով: Կորիզը հանած ծի-
րանը կէս են անում, բայց աւելի լաւ է
շորացնել սաղ-սաղ: Ջատ համեղ միբզ է
գոյանում ծիրանից՝ երբ նրա կորիզը հա-
նում են և մէջը լցնում են շաքարաջրի մէջ
քիչ եփած ծեծած ընկոյզ, որի վրայ, հոտի
համար, աւելացնում են մի քիչ ծեծած
կինամոն և մեխակ: Ընկոյզի փոխարէն
կարելի է գործ ածել կճեպից մաքրած
նուշ, պիտակ և հէնց ծիրանի կորիզի
միջուկը:

ՍԱԼՈՐ: Չորացրած սև կամ կարմիր
սալորը յայտնի է չուկայում „черносливъ“
անունով, և նրա գործածութիւնը շատ
տարածուած է: Չորացնելու համար գործ
են ածում այն տեսակ սալոր, որի միսը
կպած չէ կորիզին կամ կորիզը հեշտու-

թեամբ դուրս է գալիս *:² Լաւ ապրանք
ստանալու համար՝ սալորը չորացնում են
երեք անգամ. առաջ ենթարկում են 35—
40° ր. տաքութեան, մի օրից յետոյ նրան
դնում են 55° ատաքութեան մէջ, իսկ դար-
ձնալ մի օրից յետոյ ենթարկում են 65
—70° տաքութեան ազդեցութեան. Ամեն
անգամ հնոցից դուրս հանած սալորը
պէտք է շրջել: Եթէ սալորը սկզբում դը-
նում են բարձր աստիճանի տաքութեան
մէջ՝ այն ժամանակ հա ուռչում է և ճա-
քում: Փրանսիայում, որի չոր սալորը հըռ-
չակ է ստացել, նրան չորացնում են հե-
տեեալ. կերպով. սալորը գարսում են քթո-
ցի մէջ, զնում կաթսայի ջրի մէջ և տա-
քացնում: Երբ ջուրը սկսում է եռ գալ՝
այն ժամանակ կաթսայի միջից սալորը

* Սալորի այն տեսակները, որոնք յարմար
են չորացնելու համար՝ յիշուած են իմ «Պա-
տուաստ» գրքոյի մէջ:

հանում են և, ջուրը քամուելու համար,
դարսում են մաղի վրայ յետոյ այդպէս
պատրաստուած սալորը չորացնում են ա-
րեգակի տակ: Հարկաւոր է նկատել այս-
տեղ, որ արեգակի տաքութիւնով կարելի
է չորացնել միայն ամառնային սալոր,
որ հասունանում է յուլիս կամ օգոստոս
ամիսներում: Սեպտեմբեր ամսում հասու-
նացած սալորը արեգակի տաքութիւնով
չէ կարող չորանալ, որովհետեւ այս ժամա-
նակ արեգակի տաքութեան ոյժը պակսում
է: Սալորը կարելի է չորացնել թէ կճպած
և կորիզը հանած և թէ կճեպով և կորի-
զով: Սալորի շատ տեսակները հեշտու-
թեամբ չեն կճպում, և այս տեսակների
կճեպը հանելու համար՝ առաջ պէտք է
թառամեցնել մարմանդ տաքութեան
կամ տաք ջրի մէջ: Մեռ կարմիր սա-
լորները չորացնում են առհասարակ
առանց կճպելու, երբեմն կորիզով, եր-
բեմն անկորիզ. բայց դեղին տեսակները

շորացնում են կճպած, իսկ կորիզը կարելի է հանել, կարելի է չհանել: Ջատ անուշ համով միրգ է ստացնում սալորից՝ եթէ հետեւալ կերպով չորացնուի. պտուղի մի կողքը դանակով կտրում են, հանում են կորիզը, նրա տեղը լցնում են կճեպը հանած, ծեծած և շաքարաջրի մէջ եփած նուշ, որի հետ խառնում են մի քիչ ծեծած կինամոն և մեխակ, և յետոյ չորացնում են: Նշի փոխարէն կարելի է գործ ածել պիստակ կամ ընկոյր:

ԿԵՌԱՍ ԵՒ ԲԱԼ: Այս պատւղները չորացնում են թէ կօրիզով և թէ կորիզը հանած: Կեռասը և բալը չորացնելուց առաջ պէտք է թառամեցնել, որ կարելի է անել թէ արեգակի տակ և թէ քիչ տաքացրած հնոցում: Կորիզը հեշտ է հանել կեռասի կամ բալի թառամած ժամանակ: Զորացնել պէտք է այս պատւղները առաջ թեթև տաքութեան մէջ և յետոյ

նրա աստիճանը հետզհետէ բարձրացնել: Աւելի յարմար են չորացնելու համար մսաւոր կեռասներ և բալեր, որոնցից ստացնում է լաւ տեսքով միրգ: Կեռասից շատ անուշ միրգ է ստացնում՝ երբ չորացնում են նրան հետեւալ կերպով. կորիզը հանում են, եփամ են շաքարաջրի մէջ, ինչպէս անում են քաղցրաւենի պատրաստելու ժամանակ, և երբ քիչ եփում է՝ հանում են և չորացնում հնոցում: Այսպէս չորացրած կեռասի վրայ ցանում են շաքարափոշի՝ յետոյ դարսում են արկդի մէջ:

ԽԱՂՈՂ: Առհասարակ չորացնել պէտք է խաղողի մասար տեսակները, որովհետև հիւթալից տեսակներից ստացւում է կընճռուած չամիչ: Զորացնել պէտք է գլխաւորապէս խաղողի սպիտակ և կարմիր տեսակները: Ընտիր չամիչ է ստացւում երեանի նահանգի քիշմիշի, հիւաչյնի, գուլաբի և կարաշանի անունով խաղողի

տեսակներից: Առհասարակ խաղողը չորացնում են արեգակի տակ. բայց դա կարելի է անել օգոստոս ամսում, երբ արեգակի տաքութիւնը գեռ չէ պակսելիսկ այս ժամանակ շատ տեղերում խաղողը այնքան էլ չէ քաղցրանում, որ կարելի լինի չորացնել: Այս զէպքում աւելի յարմար է խաղողը չորացնել հնոցում: Չորացնելուց առաջ խաղողը պէտք է թառամեցնել եփ եկող մոխրաջրի մէջ: Դրա համար խաղողի որթի ճիւղերը այրում են և նրանց մոխրը կաթսայում խառնում են ջրի հետ: Միւս օրը այս ջուրը քամում են մի ուրիշ կաթսայի մէջ և տաքացնում են: Երբ ջուրը կառում է եռ գալ՝ այն ժամանակ խաղողի ողկոյզը, կոթից բռնած, թաթախում են ջրի մէջ, պահելով նրա մէջ մի կամ երկու ըռպէ, նայած խաղողի նրբութեանը: Եյսպէս թառամեցրած խաղողը փռում են մաղի վրայ, և երբ ջուրը քամում է՝ այն ժամանակ

չորացնում են հնոցում կամ արեգակի տակ: Մոխրաջրի մէջ թառամեցրած խաղողը նախ որ շատ շուտ է չորանում (հնոցում մի քանի ժամուայ մէջ, իսկ արեգակի տակ՝ երեք կամ չորս օրուայ ընթացքում) և երկրորդ՝ նրանից ստացում է աւելի քաղցր, ապակու նման թափանցիկ և ղեղին գոյնով շամիչ. այնինչ չթառամեցրած խաղողը արեգակի տակ օկոստոսի վերջերում, երբ շոգ տեղերում խաղողը կարելի է չորացնել՝ հաղիւ է չորանում տասն—տասնհինգ օրուայ ընթացքում, և ստացւում է նրանից մութ գոյնով շամիչ: Խոշոր հատիկներով խաղողը չորանալուց յետոյ աւելի լաւ է դարսել արկդում սաղ-սաղ ողկոյզներով, որ վաճառացոցում աւելի յարգի է:

Եյստեղ մենք նկարագրեցինք ալգու զիսաւոր պտուղների չորացնելու եղանակը, այսինքն այն պտուղների, որոնց չորը աւելի գործած ական է որոնց մէջ աւելի

պահանջ կայ. բայց միւս պտուղների շիրի
գործածութիւնը պակաս տարածուած չէ,
ինչպէս օրինակ՝ շորաչրի, թթի, թզի,
արքայամորու (մալիս), հաղարջի (շմօր-
դինա) և այլ պտուղների չորը։ Նոյնպէս
մեծ նշանակութիւն կարող է ունենալ
սեխի չորը, որ շատ անուշ միրգ է։ Անզը-
կովկասում մշակում են սեխի շատ տեսակ-
ները, որոնք վաճառում են չնչին զնով,
մանաւանդ նրացածր, թէ քաղցր տեսակ-
ները, օրինակ երեանի նահանգի շալլաղ
անուանուած սեխը և Բագուայ ու Գանձա-
կի նահանգների սեխի շատ տեսակները.
այն-ինչ այս աժանագին սեխերը մեծ ար-
դիւնք կարող են տալ՝ եթէ նրանք չորա-
ցնուին և արտահանուին իբրև միրգ։ Սեխը
չորացնում են հետեւալ կերպով։ ճաղ-ճաղ
են անում, կճպում են և վեր են առնում
միջի փափուկ երեսից մի շերտ, իսկ մնա-
ցած աւելի կարծը մասը կտոր-կտոր են
անում և շարում են թելի վրայ, ապա շա-

րանը կախում են հով տեղ։ Երկու օրից
յետոյ, երբ սեխը քիչ թառամում է՝ նրա
շարանները կախում են չորանալու հա-
մար արեգակի տակ։ Աւելի հեշտ կարող է
չորանալ սեխը հնոցում կամ թոնիրում,
միայն այդ գէպքում նրան պէտք է առաջ
ենթարկել թոյլ տաքութեան ազդեցու-
թեան, իսկ յետոյ տաքութեան աստիճանը
բարձրացնել մինչև 60° թ.։


Մեղ մնում է հաղորդել մի քանի տե-
ղեկութիւններ բանջարանոցի բոյսերի վե-
րաբերմամբ։ Մեր երկրում բանջարանոցի
բոյսերը չորացնում են բաց օդի մէջ կամ
արեգակի տուած, բայց այս կերպ չորա-
ցրած բոյսերը կորցնում են իւրեանց գոյ-
նը, համը, հոտը և առհասարակ թարմ
բոյսի յատկութիւնները. այն-ինչ հնոցում
չորացրած բոյսը իւլ համով, հոտով և նըր-
ռութեամբ դժւար է ջակել թարմ բոյսից։

Զորացնել կալելի-է զետնախնձորը
(картофель), ըաղըիջանը, ոսկէխնձո-

ըլ (помедоры), կանաչ լոբին, բամիան, զազարը, ճակնդեղը, գինծը, անանուխը, շահասպրամը, կանաչ տաքտեղը և այլն:

Այս բոյսերից գետնախնձորը և բաղրիջանը կճպելուց և կտոր-կտոր անելուց յետոյ պէտք է դնել 15—20 լոպէ աղաջրի կամ բորակաջրի մէջ, որի ազդեցութեամբ չորանալուց յետոյ՝ սպիտակ գոյն են ունենում և դիմանում են երկար ժամանակ; ձակնդեղը, գետնախնձորը և գագարը չորացնելու համար կոտորում են զանազան կերպ—աստղի նման, ծաղկի ձեռվ, ժապաւէնի նման և այլն, որ կարելի է անել թէ ձեռքով և թէ առանձին գործիքներով։ Միւս բանջարանոցի բոյսերը չորացնելուց առաջ հարկաւոր է թառամեցնել տաք ջրի մէջ այսինքն քիչ խաշել. միայն կ անաշ լոբին, բամիան և կանաչ տաքտեղը հարկաւոր է քիչ խաշել շատ թոյլ աղաջրի մէջ և չորացնել 70° թաքութեան մէջ։

Կանաչ լոբին չորացնում են կոտորած, իսկ բաղրիջանը սաղ-սաղ, կամ կոլոր կտորներով, միայն պէտք է սերմը և կճեպը հանել։ Սաղ-սաղ չորացրած բաղրիջանը գործ են ածում գոլմայ անուանուած կերակուրը պատրաստելու համար։ Կանաչ լոբին կոտորելու համար օգտուում են դա-



16 ԼՈԲԻ ԿՈՏՈՐԵԼՈՒ ԳՈՐՔԱԲ

Նազան գործիքներով. աւելի յարմար է զբա համար այստեղ նկարուած փոքրիկ գործիքը (նկ. 16), որի միջոցով լոբին շատ հեշտ կարելի է կոտորել մի մեծութեան

կտոներով։ Պէտք է լորին քցել գործիքի վրայ եղած ծակերի մէջ և շարժել նրա կոթը. այն ժամանակ նա մանր կկոտօրուի, ներքեմի ծակից գորս կդայ և կթափուի գործիքի տակը զրուած ափսէի մէջ։

Կերջում հարկաւոր ենք համարում յիշել, որ մեր երկրում մեծ գործածութիւն ունին և ուտելու վայրենի բոյսերը, ինչպէս են՝ բոլին, բոլին, ծննքեկը, սիրեեխը, աւելուկը, նուփիկը, թելուկը, շրէշը, փրփրեմը (փարփինայ), փիփիերթը և այլն։ Այս բոյսերը նոյնպէս կարելի է չորացնել հնացում, և այս գէպքում նրանք կպահպանեն թարմ բոյսի բոլոր յատկութիւնները։ Զորացնել կարելի է ուտելու վայրենի բայսերը այնպէս, ինչպէս չորացնում են բանջարանոցի բոյսերը, միայն բոլին և բոլին պէտք է առաջ խաչել թոյլ աղաջրի մէջ և յիտոյ չորացնել։

Պտուղ և ուրիշ բոյսեր չորացնելու հա-

մար հարկաւոր է որոշ հմտութիւն և փորձառութիւն. յամենայն գէպս պէտք է ի նկատի ունենալ հետեւել անհրաժեշտ կառոնները.

1) Լաւ ապրանք ստանալու համար պէտք է չորացնել բոլորովին հասած պըտուղ։

2) Միենոյն պտուղի զանազան տեսակները՝ չորացնելու ժամանակ չպէտք է խառնել մէկմէկու հեա. որովհետեւ զանազան տեսակները զանազան յատկութիւններ ունին, ուրեմն միաժամանակ չեն կարող չօրանալ. մէկը շատ կշորանայ, միւսը քիչ, և այս պատճառով եփելու ժամանակ մէկը շուտ կկակղի, իսկ միւսը ուշ: Խառն չորացրած պտուղը շուկայում չէ գնահատում։

3) Իմեն մի տեսակ պտուղ չորանալու համար պահանջում է որոշ աստիճանի տարբութիւն. կտաւող պտուղները (տանձը, խնձորը, սերկելը) առաջ պէտք է են-

թարկել բարձր աստիճանի տաքութեան (60—80⁰ թ.), իսկ յետոյ տաքութեան աստիճանը ցածրացնել (մինչև 45—50⁰). իսկ կորիգաւոր պտուղները (ծիրանը, դեղձը, սալորը, կեռասը և այլն) սկզբում պէտք է անթարկել թոյլ տաքութեան աղդեցութեան, իսկ յետոյ նրա աստիճանը աւելացնել: Բոյսերը չորացնելու համար պէտք է ենթարկել հէնց սկզբից բարձրը աստիճանի տաքութեան աղդեցութեան:

4) Հպէտք է թողնել, որ պտուղը ոչ շատ և ոչ էլ կիսատ չորանայ: Հատ շորացած պտուղը այնքան էլ համով չէ լինում և լաւ չէ եփում, իսկ կիսաչոր պտուղը շատ չուտ բորբոսնում է: Եթէ պտուղը կիսատ է չորացել և սկսում է բորբոսնել այն ժամանակ նրան նորից պէտք է շորացնել:

5) Տանձը, խնձորը, սերկելը և դեղձը

կճպելուց յետոյ սկսում են սեանալ, և այս գէպօւմ ստացում է անախորժ գոյնով միրգ: Դրա առաջը առնելու համար, ինչպէս Իշեցինք վերկը՝ այս պտուղները մաքրելուց յետոյ անպատճառ պէտք է ենթարկել ծմբի միի աղդեցութեան:

6) Պտուղը չորանալուց յետոյ իսկոյն պէտք է հանել հնոցից և հովացնել բացօդի մէջ, որովհետև հնոցի մէջ հովացած միրգը փափուկ չէ լինում և կորցնում է իւր փայլը:

7) Չորսացրած պտուղը, նոյնպէս և չորսցը բոյսը պէտք է դարսել փայտեայ կամ սպիտակ թիթեղից շինած արկղի մէջ, մաքուր սպիտակ թղթի վրայ: Արկղի մէջ լցնելուց առաջ միրգը կամ բոյսը պէտք է կշռել և նրա քանակութիւնը և անունը գրել արկղի վրայ, նշանակելով և արկղի ծանրութիւնը: Միրգը դարսելուց յետոյ արկղի բերանը պէտք է ամուր գոկել, որ օդ չխաղայ նրա մէջ: Այսպէս

պահուած միրգը կամ չորացած բոյսը կա-
րող է զիմանալ անվնաս 5—6 տարի:

Վերջացնելով մեր այս փոքրիկ աշխա-
տութիւնը՝ հարկաւոր ենք համարում մի
անգամ էլ յիշել, որ արուեստական տա-
քութիւնով պառազ և բայս չորացնելը ամեն
կիրառվ գերադասելի է, որովհետեւ ստաց-
ւում է անհամեմատ լաւ ապրանք: Ճշմա-
րիս է, որ այս միջոցով պառազ չորացնե-
լու համար պահանջում է որոշ ծախս.
Բայց ի նկատի ունենալով, ոք լաւ յատ-
կութիւններ ունեցող միրգը մի քանի ան-
գամ աւելի է գնահատում և այդպիսի
մրգի մեծ պահանջ կայ շուկայում՝ յիշեալ
ծախսը զգալի չէ կարող լինել: Ար-
ուեստական տաքութիւնով պառազ չորա-
ցնելու համար մենք խորհուրդ ենք տալիս
գիւղերում գործարաններ հիմնել ընկերու-
թութեամբ, այսինքն մի քանի այգետէրեր
միասին, կամ հիմնել հասարակական գոր-

ծարպններ, մի քանի հնոցներով և պարա-
գաներով: Հասարակական և ընկերական
գործարանները նրանով են յարմար, որ
սկզբում իւրաքանչիւր գործարանի համար
կարելի է վարձել պառազ չորացնելու մէջ
հմուտ վարպետ, որ թէ կծանօթացնէ
պառազ չորացնելու եղանակների հետ և թէ
կսովորցնէ զանազան անուշահամ ուտելի-
զէններ պատրաստել պառազի կճեպից, մի-
ջուկից և վիասուած պառազից, որոնք
անյարմար են չորացնելու համար: Պառազ
չորացնելու գործարանը որքան էլ թանգ
նստի,՝ այնուամենայնիւնա իւր վրայ արած
ծախսը հէնց առաջի տարին կհանէ: Բա-
ցի սրանից՝ գործարանը մեծ ոգուած կտայ
իւրաքանչիւր այգետիրոջը զլխաւորապէս
նրանով, որ նա միջոց կունենայ մի քանի
անգամ աւելացնել իւր այգու եկամուտը,
վաճառելով նրա բերքը աւելի բարձր գնով:

Պտուղ չորացնելու համար ամեն
տեսակ գործիքներ եւ հնոցներ կա-
րելի է բերել տալ արտասահմանից
կամ Ռուսաստանից՝ Կովկասիան
Կայսերական Դիւդատնտեսական Ըն-
կերութեան կամ Կովկասիան ճիւղի
Ռուսիայի Կայսերական Այգեպանա-
կան Ընկերութեան միջոցով:



Ա. Զելինսկու ժողովրդական գիտաժողովա-
կան աշխատութիւններ:

- 1) Համ 5 կ.
- 2) Գիտնակուլ (կրկը, տպագրութ.) 4 »
- 3) Տորի 5 »
- 4) Պատուաստ 5 »
- 5) Պտուղ չոլացնելը 5 »

2013
19182

ՀՀ Ազգային գրադարան



NL0084420

